600.0033.12.06.03.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2003 թվականի № 33Ա
ք.Երևան

«ՍՅՈՒՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԵՂԵԳԻՍ« ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ № 0088 ԵՎ № 0101 ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ «ԷԼԵԳԻՍ ՀԷԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՄԲ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի № 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը, «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի բ) ենթակետը, 23-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հունվարի 30-ի № 4 որոշմամբ սահմանված կարգը և 2003 թվականի մարտի 3-ի № 14 որոշումը՝ ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Էլեգիս ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած հայտը և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի մայիսի 6-ի ««Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության «Եղեգիս» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» № 30 և 2002 թվականի դեկտեմբերի 24-ի ««Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության

«Եղեգիս» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» № 93Ա որոշումներով «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրված Վայոց Ձորի մարզի Հերմոն գյուղի վարչական տարածքում՝ Եղեգիս գետի վրա կառուցված «Եղեգիս» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության № 0088 և № 0101 լիցենզիաները վերաձևակեպել «Էլեգիս ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ՝ տրամադրելով «Եղեգիսվ» փոքր հիդրոէլեկտրակայանի երկու հերթերում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության միասնական լիցենզիա:

2. Հաստատել «Էլեգիս ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Եղեգիս» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները (հավելված):
3. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի դեկտեմբերի 24-ի ««Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության «Եղեգիս» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին» № 94Ա որոշման վերնագրում և 1-ին կետում ««Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության” բառերը փոխարինել ««Էլեգիս ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության» բառերով:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի մայիսի 6-ի ««Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության «Եղեգիս» փոքր ՀԷԿ-ում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» № 30 և 2002 թվականի դեկտեմբերի 24-ի ««Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության

«Եղեգիս» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին»« № 93Ա որոշումները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ն.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք.Երևան
6 հունիսի 2003թ.
ժամը 17:00